ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-20-3/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «30» .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.10.2019թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-3/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են մինչև համաձայնագրի կնքումը կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա, 2020թ. հունվարի 1:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 5761200 (հինգ միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Արագածոտն, Ավան, 2/Տ/, 5փ, 1 փկղ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1660006756360100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 05023335
ՀՀ ՊՆ ՆՅԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-3/1-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2020թ-ին ըստ եռամսյակների			
						1-ին	2-րդ	3-րդ	4-րդ , բայց ոչ ուշ քան 10.12.2020թ
1	Քաղած ծաղիկներ (Ծաղիկներ)	հատ	3000	112.8	338400	Համաձայն ներկայացված հայտերի			
2	Ծաղկային կոմպոզիցաներ (Ծաղկեզամբյուղներ)	հատ	100	4800	480000				
3	Ծաղկային կոմպոզիցաներ (Ծաղկեպսակ մեծ)	հատ	100	35640	3564000				
4	Տեղեկատու (Դիտողական քարոզչական ցուցապաստառներ)	հատ	120	11490	1378800		120		

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ
Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ տնօրեն
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՄՊՈՐՏ ԹՐԵՅԴ
ИМПОРТ ТРЕЙД
IMPORT TRADE
05023335

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-3/1-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝									
Հ/հ	անվանումը	CPV	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Քաղած ծաղիկներ (Ծաղիկներ)	03121200/504	90000	180000	180000	180000	270000	270000	270000	360000	360000	360000
2	Ծաղկային կոմպոզիցաներ (Ծաղկեզամբյուղներ)	03121210/501	125000	250000	250000	250000	375000	375000	375000	500000	500000	500000
3	Ծաղկային կոմպոզիցաներ (Ծաղկեպսակ մեծ)	03121210/502	1000000	2000000	2000000	2000000	3000000	3000000	3000000	4000000	4000000	4000000
4	Տեղեկատու (Դիտողական քարոզչական ցուցապաստառներ)	22131200/501		1890000	1890000	1890000	1890000	1890000	1890000	1890000	1890000	1890000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ս. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ տնօրեն

Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍՊՈՒՆ ԹՐԵՅԴ
ИМПОРТ ТРЕЙД
IMPORT TRADE
05023335